



Արարատյան բակալավրիատ

Արարատյան բակալավրիատի
ավագ դպրոցի
Առարկայական վերջնարոյունքներ

Անգլերեն լեզու

ԱԲ-ի խորացված ուսուցման համար

Ծրագիրը նախատեսված է 2016- 2017 թթ. քննական շրջանի համար

Բովանդակություն

1	Առարկայի նպատակները.....	3
2	Առարկայի բովանդակությունը	3
2.1	10-րդ դասարան B1 -ից B2 մակարդակ.....	3
	Ուսումնասիրվող թեմաներ	5
	Քերականություն	5
	Ուսումնասիրվող գրականություն	5
2.2	11-րդ դասարան B2-ից C1 մակարդակ	6
	Ուսումնասիրվող թեմաներ.....	7
	Քերականություն	7
	Ուսումնասիրվող գրականություն	8
2.3	12-րդ դասարան B2-ից C1 մակարդակ	8
	Ուսումնասիրվող թեմաներ.....	9
	Քերականություն	9
	Ուսումնասիրվող գրականություն	10
3	Առարկայի գնահատման սկզբունքները.....	11
	Ընթացիկ գնահատում.....	11
	Ամփոփիչ գնահատում	11

1 Առարկայի նպատակները

ԱԲ-ի «անգլերեն» առարկան դասավանդվում է որպես միջազգային լեզու և ապահովում է նվազագույնը B2+/C1 (կախված սկզբնական մակարդակից) մակարդակի անգլերեն տիրապետում:

Առարկայի նպատակն է հնարավորություն տալ աշակերտին՝

- ձևավորելու հմտությունների կայուն հիմք, որոնք անհրաժեշտ են լեզվի հետագա զարգացման և կատարելագործման համար
- զարգացնելու մտքերի փոխանցման կարողությունը և հաղթահարելու հաղորդակցման ընթացքում առաջացած հնարավոր դժվարությունները
- զարգացնելու տարբեր ձևաչափերով մատուցվող լեզուն ըմբռնելու կարողություն
- գործածելու միջազգային լեզուն որպես այլ առարկաներ հետազոտելու և նոր գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերելու միջոց
- գործածելու միջազգային լեզուն որպես օտար լեզվով մասնագիտական կրթություն ստանալու անհրաժեշտ գործիք

Ուսուցումը կազմակերպվում է տարբերակված խմբերում (ըստ լեզվի մուտքային իմացության):

2 Առարկայի բովանդակությունը

2.1 10-րդ դասարան B1 -ից B2 մակարդակ

10-րդ դասարան B1 -ից B2 մակարդակ	
Թեմա	Վերջնարդյունք
Կարդալու հմտություններ	- տարբեր արագությամբ (հիմնականում ինքնուրույն, այսինքն առանց ուսուցչի ու բառարանի օգնության) կարդալ բազմազան տեքստեր և հասկանալ դրանց հիմնական իմաստն ու նպատակը
	- տարբեր արագությամբ (հիմնականում ինքնուրույն, այսինքն առանց ուսուցչի ու բառարանի օգնության) կարդալ բազմազան տեքստեր՝ ուշադրություն դարձնելով տեքստի մանրամասնություններին և պատասխանել դրանց վերաբերյալ համապատասխան հարցերին
	- գուշակել անծանոթ բառերի իմաստը՝ հիմնվելով համատեքստի վրա

10-րդ դասարան B1 -ից B2 մակարդակ

Թեմա	Վերջնարդյունք
	<ul style="list-style-type: none"> - համատեքստից ելնելով այլ բառերով ձևակերպել տեքստի որոշ նախադասություններ կամ նախադասության մասեր
Գրավոր աշխատանքի հմտություններ	<ul style="list-style-type: none"> - գրել զեկույցներ առաջադրված թեմաներով՝ պահպանելով Էսսեագրության ժամանակակից կանոնները (կառուցվածք, լեզվական ոճ, մեջբերումներ) - հեղինակել փոքր բանաստեղծություններ ու պատմվածքներ - եղած բառապաշարի սահմաններում մանրամասն կարագրել մարդկանց արտաքինն ու բնավորությունը - գրել ֆիլմի և գրքի սեղմագրեր, - գրել ոչ պաշտոնական և կիսապաշտոնական ոճի նամակներ - ինքնուրույն լրացնել դիմումի ձևեր
Խոսելու հմտություններ	<ul style="list-style-type: none"> - հաջողությամբ հաղորդակցվել տարբեր երկրների անգլիախոս բնակչության հետ - մանրամասն քննարկել ծանոթ թեմաներ - արտահայտել և հիմնավորել սեփական կարծիքը ներկայացված թեմայի վերաբերյալ - ներկայացնել պարզ և հստակ կառուցվածքով սահիկահանդեսներ, որոնք ունեն ինչպես հիմնական կետեր, այնպես էլ հետաքրքիր մանրամասնություններ - անծանոթ թեմայով զրույցի ժամանակ տալ պատասխան ու պարզաբանում պահանջող հարցեր - հանպատրաստից զրույց ծավալել մի շարք թեմաների շուրջ քննարկումների ժամանակ պաշտպանել սեփական կարծիքը հիմնավորումներով, անել առաջարկություններ և ենթադրություններ
Լսելու հմտություններ	<ul style="list-style-type: none"> - հիմնականում հասկանալ ելույթներ, դասախոսություններ, բանավեճեր և հումորային հաղորդումներ և՛ ծանոթ, և՛ անծանոթ թեմաներով - հասկանալ անգլիալեզու ֆիլմեր, տարբերել ու որոշակիորեն հասկանալ փողոցային ժարգոնը /սլանգ/, որոշ մասնագիտական տերմիններ և խոսակցի ձայնի տոնն ու տրամադրությունը - առանց լարվելու՝ հիմնականում հասկանալ հեռուստատեսային լուրերն ու ընթացիկ իրադարձությունների մասին հաղորդումները

Ուսումնասիրվող թեմաներ

- Սպորտ
- Մարդիկ և բնավորության գծեր
- Ճամփորդություն ժամանակի մեջ
- Նորածնություն
- Նախաձեռնություններ
- Մեր աշխարհը
- Խաղաղություն
- Բարություն
- Հռչակ
- Լեզուներ
- Երաժշտություն
- Բնություն
- Ֆիլմեր

Քերականություն

- Ստորադասական նախադասություններ which, who և that բառերով
- Ստորադասական նախադասություններ what բառով
- Անորոշ բայ և Gerund
- Անուղղակի խոսքի կրկնողություն, զեկուցող բայերի ներմուծում (deny, claim, suggest, recommend, offer, promise, warn, refuse, advise, encourage)
- Անցյալ ժամանակի արտահայտման ձևեր would և used to բառերով
- Մակբայներ ու մակբայական արտահայտություններ (by accident, in a hurry, in private, in public, in secret, in a row, on purpose, in a panic)
- Ըղծական եղանակով պայմանական նախադասությունների կրկնողություն
- Խառը ժամանակներով պայմանական նախադասություններ
- Ապագան նկարագրող Future Continuous, Future Perfect ժամանակաձևեր
- Past Perfect Passive և Past Perfect Continuous ժամանակաձևեր
- Մոդալ բայերի կրկնողություն
- Ներկա ժամանակ ցույց տվող բոլոր ժամանակաձևերի կրկնողություն
- Անջատական հարցեր բոլոր ժամանակաձևերում
- Ստորադասական նախադասություններ հարցական-հարաբերական դերանունների միջոցով
- Համեմատություններ կազմելու եղանակներ far, nowhere near, almost, even, just բառերի միջոցով

Ուսումնասիրվող գրականություն

Հիմնական դասագրքեր

- **English in Mind 4 (Student's Book)**, Herbert Puchta, Jeff Stranks and Peter Lewis-Jones; Cambridge University Press; 2nd edition; 2011
- **English in Mind 4 (Workbook)**, Herbert Puchta, Jeff Stranks and Peter Lewis-Jones; Cambridge University Press; 2nd edition; 2011
- **English Grammar in Use with Answers and CD-ROM: A Self-Study Reference and Practice Book for Intermediate Learners of English**; Raymond Murphy; Cambridge University Press; 2012
- The 7 Habits of Highly Effective Teens: The Ultimate Teenage Success; [Sean Covey](#); Fireside; 1st edition; 1998

- Who Moved My Cheese?: An Amazing Way to Deal with Change in Your Work and in Your Life; [Spencer Johnson](#); G. P. Putnam's Sons; 1st edition; 1998
- My Name is Aram; William Saroyan; Harcourt Brace; 1st edition, 1940

2.2 11-րդ դասարան B2-ից C1 մակարդակ

11-րդ դասարան B2-ից C1 մակարդակ	
Թեմա	Վերջնարդյունք
Կարդալու հմտություններ	- հասկանալ հոդվածներ ու զեկույցներ անձանոթ թեմաների շուրջ
	- հասկանալ անգլերեն բնագրով ժամանակակից և դասական գրեթե ցանկացած գրական գործ
	- հասկանալ պաշտոնական ոճով գրված նամակներ
Գրավոր աշխատանքի հմտություններ	- նկարագրել իրավիճակներ ու երևույթներ
	- մանրամասն գրառումներ կատարել կարդացածի ու լսածի շուրջ
	- պատրաստել C1 մակարդակի բարդությանը համապատասխանող տեքստերի սեղմագրեր
	- գրել տարբեր վիճելի թեմաների շուրջ էսսեներ 300-350 բառի շրջանակում արտահայտելով սեփական համաձայնությունը կամ անհամաձայնությունը՝ ներկայացնելով համապատասխան փաստարկներ ու օրինակներ
	- գրել պաշտոնական ոճի նամակներ
- կարծիք գրել ֆիլմի/ գրական ստեղծագործության մասին՝ վերլուծելով տվյալ գործում արծարծված հիմնական գաղափարներն ու բացատրելով սեփական կարծիքը դրանց շուրջ	
Խոսելու հմտություններ	- հանգամանորեն զրուցել բարդ, երբեմն վերացական թեմաների շուրջ, մանրամասն նկարագրել գործընթացներ ու երևույթներ, կատարել եզրահանգումներ
	- արդյունավետորեն մասնակցել կոնկրետ, վերացական, խրթին կամ անձանոթ թեմաների շուրջ ընթացող բանավեճերի
	- մանրամասն պատմել որևէ իրադարձություն/ պատմություն, որը տեղի է ունեցել սեփական կյանքում
	- անցկացնել հարցազրույց նախօրոք մշակած հարցերով
	- հասկանալ վերացական թեմաների մասին հաղորդումներ, թեև թույլատրելի է որոշ մանրամասներ բաց թողնել և ճշտել

11-րդ դասարան B2-ից C1 մակարդակ

Թեմա	Վերջնարդյունք
Լսելու հմտություններ	դրանք հատկապես այն դեպքում, երբ խոսողի արտասանությունը անձանոթ է ու դժվարըմբռնելի
	- խոսքի մեջ հասկանալ մի շարք դարձվածքների ու խոսակցական արտահայտությունների իմաստը,
	- հասկանալ բազմաժանր բնույթի հեռուստատեսային և ռադիո կյութեր

Ուսումնասիրվող թեմաներ

- Ծճարտություններ ու լեզենդներ
- Որոշումներ
- Հորինված աշխարհներ
- Այլընտրանքային սպորտաձևեր
- Գովազդի աշխարհ
- Գոյատևման բնագոյներ
- Ինքնուրույնություն
- Պատերազմներ
- Արարում ու ոգեշնչում
- Տարբեր սերունդներ
- Գեղեցկության չափանիշներ
- Անդրադարձ անցյալին ու պատմությանը
- Ապրումակցում

Քերականություն

- Մոդալ բայեր, որոնք ցույց են տալիս հավանականություն և եզրահանգում (may, can't will, must, might)
- Future in the past ժամանակաձև
- Բարդ ստորադասական նախադասություններ what և it բառերով
- Կարողություն և ձախողում ցույց տվող մոդալ բայեր ու արտահայտություններ
- Բազմակի որոշիչների տեղը նախադասության մեջ
- Մակբայների տեղը նախադասության մեջ
- Past Perfect, Past Perfect Passive, Past Perfect Continuous ժամանակաձևերի կրկնողություն
- Անուղղակի խոսքում և ստորադասական նախադասություններում օգտագործվող բայեր ու կառույցներ (admit, confess, tell, ask, persuade, apologize, deny, regret, claim, offer, suggest)
- Ըղծական եղանակով արտահայտված պայմանական նախադասություններ
- Առանց if շաղկապի, այլընտրանքային ձևերով կազմվող պայմանական կառույցներ
- Հակումներ ու սովորություններ արտահայտելու համար օգտագործվող կառույցներ (feel like doing, to tend to do, to pick on somebody)
- Պատճառական have բայը տարբեր արտահայտություններում
- Մոդալ բայերը կրավորական սեռում
- Future Continuous, Future Perfect ժամանակաձևեր
- Ապագայի մասին խոսելու համար այլընտրանքային կառույցներ (to be about to, to be off to, to be due to, to be bound to, to be supposed to, to be thinking of)
- Անցյալի ժամանակաձևեր վարկած արտահայտելու համար (wish, if only, it's time, would rather/sooner)
- Փոխակերպումներ the ones/so բառերի միջոցով

- Նախադասության որևէ անդամի զեղջում
- Շրջադասություն ժխտական նախադասություններում իմաստը լրացուցիչ շեշտելու նպատակով

Ուսումնասիրվող գրականություն

- **English in Mind 5 (Student's Book)**, Herbert Puchta, Jeff Stranks and Peter Lewis-Jones; Cambridge University Press; 2nd edition; 2008
- **English in Mind 5 (Workbook)**, Herbert Puchta, Jeff Stranks and Peter Lewis-Jones; Cambridge University Press; 2nd edition; 2008
- Oxford Word Skills Advanced, Student's Pack (Book and CD-ROM); [Ruth Gairns](#) and [Stuart Redman](#); Oxford University Press; 2009
- First Certificate Language Practice; Michael Vince; Macmillan; 2010
- The 7 Habits of Highly Effective Teens: The Ultimate Teenage Success; [Sean Covey](#); Fireside; 1st edition; 1998

2.3 12-րդ դասարան B2-ից C1 մակարդակ

12-րդ դասարան B2-ից C1 մակարդակ	
Թեմա	Վերջնարդյունք
Կարդալու հմտություններ	- հասկանալ հոդվածներ ու զեկույցներ խորթին ու իրեն անձանոթ թեմաների շուրջ՝ հետազոտություն կատարելու նպատակով
	- վերլուծել տեքստեր և բացահայտել հեղինակի լեզվի ոճի և բառապաշարի ընտրության հիմքերը
	- հասկանալ անգլերեն բնագրով ժամանակակից և դասական գրեթե ցանկացած գրական գործ
	- կարդացած տեքստում առանձնացնել փաստերը կարծիքներից
	- կարդացած տեքստում հասկանալ ակնարկները, անուղղակի ձևով ասված մտքերը, գրողի զգացածը, նպատակն ու մտադրությունը
Գրավոր աշխատանքի հմտություններ	- պատրաստել հեղինակային տեքստերի, մասնավորապես հայտնի օրաթերթերում տպագրված հոդվածների սեղմագրեր
	- մանրամասն նկարագրել իրավիճակներ ու երևույթներ
	- գրավոր խոսքում ուշադրություն դարձնել քերականական կառույցների ու բառապաշարի (այդ թվում դարձվածքների) բազմազանությանը, քերականության, կետադրության ու շարահյուսության ճիշտ գործածությանը

	<ul style="list-style-type: none"> - գրել համալսարան, ճամբար կամ ցանկացած աշխատանքի դիմելու համար պահանջվող ուղեկցող նամակներ (cover letter) - գրել Էսսեներ 300-350 բառի սահմաններում, որտեղ անհրաժեշտ է համեմատել ու հակադրել երևույթներ, կարծիքներ կամ հասկացություններ
Խոսելու հմտություններ	<ul style="list-style-type: none"> - կատարած հետազոտության հիման վրա բանավիճել կոնկրետ, վերացական, խրթին կամ անձանոթ թեմաների շուրջ - խոսքի մեջ օգտագործել բազմազան կառույցներ ու հարուստ բառապաշար - մանրամասն պատմել մի իրադարձություն/ պատմություն, որ տեղի է ունեցել սեթական կյանքում - մինչև հինգ թույլի սահմանում ելույթ պատրաստել նախընտրված թեմայի շուրջ, որն իր մեջ պարունակի որևէ հարցին նայելու նոր տեսանկյուն և լինի հիմնավորված ու ոգևորող - կատարած հետազոտության հիման վրա բանավիճել կոնկրետ, վերացական, խրթին կամ անձանոթ թեմաների շուրջ - խոսքի մեջ օգտագործել բազմազան կառույցներ ու լայն բառապաշար
Լսելու հմտություններ	<ul style="list-style-type: none"> - հասկանալ վերացական ու կոնկրետ թեմաների մասին հաղորդումներ ու փաստագրական ֆիլմեր, նույնիսկ այն դեպքերում, երբ խոսողի արտասանությունը մի փոքր դժվար է ըմբռնել - հասկանալ խոսքի մեջ մի շարք դարձվածքների ու խոսակցական արտահայտությունների իմաստը - հասկանալ բազմաժանր բնույթի հեռուստատեսային և ռադիո կյուլթեր

Ուսումնասիրվող թեմաներ

- Ծամփորդություն
- Կրթություն
- Աշխատանք
- Ձեռքբերումներ
- Նորարարություններ
- Ժամանակակից աշխարհը

Քերականություն

- Անցյալ ժամանակի իմաստ արտահայտող բոլոր ժամկաձևերը
- Ապագայի իմաստ արտահայտող բոլոր ժամանակաձևերը
- Բոլոր մոդալ բայերը
- Ենթակայի ու ստորոգյալի միջև համաձայնություն

- Շրջադասություն
- Պայմանական ու ըղձական եղանակ
- Պատճառ ու նպատակի շաղկապներ

Ուսումնասիրվող գրականություն

- IGCSE, English as a Second Language (Coursebook), Peter Lucantoni; Cambridge University Press, 2014
- IGCSE, English as a Second Language (Workbook), Peter Lucantoni; Cambridge University Press, 2014
- 400 Must-Have Words for the TOEFL, [Lynn Stafford-Yilmaz](#) and [Lawrence Zwier](#); McGraw-Hill; 1st edition, 2005

Ուսուցիչներին տրամադրվում է գեղարվեստական գրականության ցանկ, որտեղից նրանք կարող են ընտրել ցանկացած ստեղծագործություն և ներառել իրենց ուսումնական ծրագրի մեջ՝ հաշվի առնելով աշակերտների հետաքրքրությունները, կարիքներն ու անգլերենի իմացության մակարդակը: Ստորև աղյուսակում ներկայացված են հեղինակներն ու ստեղծագործությունները:

Կարճ պատմվածքներ	Վեպեր	Բանաստեղծություններ	Առակներ
"The Fly" by Katherine Mansfield	"Fahrenheit 451" by Ray Bradbury	William Shakespeare	William Saroyan
"Man from the South" by Roald Dahl	"The Outsiders" by S. E. Hinton	George Gordon Byron	Aesop
"Shooting an Elephant" by George Orwell	"Life of Pi" by Yann Martel	Robert Frost	
"The Use of Force" by William Carlos Williams	"Outliers" by Malcolm Gladwell	Max Ehrmann	
"The Handsome and Deformed Leg" by Benjamin Franklin	"1984" by George Orwell		
"A Hunger Artist" by Franz Kafka	"Pride and Prejudice" by Jane Austen		
"Harrison Bergeron" by Kurt Vonnegut	"And Then There Were None" by Agatha Christie		
"To Build a Fire" by Jack London	"Call of Wild" by Jack London		
"The Black Cat" by Edgar Allen Poe	"Animal Farm" by George Orwell		
"Once Upon a Time" by Nadine Gordimer	"Treasure Island" by Robert Louis Stevenson		
"The Little Prince" by Antoine de Saint-Exupery	"The Old Man And The Sea" by Ernest Hemingway		
"Everyday Use" by Alice Walker	"The Sun Also Rises" by Ernest Hemingway		
"The Destructors" by Graham Greene	"A Farewell to Arms" by Ernest Hemingway		
Short Stories by O'Henry	"To Kill a Mockingbird" by Harper Lee		
"The Tell Tale Heart" by Edgar Allen Poe	"Three Men in a Boat" by Jerome K. Jerome		
"The Lottery" by Shirley Jackson	"Oliver Twist" by Charles Dickens		

3 Առարկայի գնահատման սկզբունքները

Անգլերենի դասընթացը մեկնարկում է հայտորոշիչ ստուգմամբ, որի արդյունքում սովորողները բաժանվում են ուսումնական խմբերի ըստ մակարդակների: Ուսումնառության ընթացքում կիրառվում են ձևավորող և գումարային գնահատումները, ինչպես նաև ամփոփիչ ստուգումը:

ԱԲ-ի «անգլերեն» առարկայի ընթացիկ և ամփոփիչ քննությունները պետք է ստուգեն սովորողի հետևյալ կարողությունները.

- ընկալել և արձագանքել անգլերենով տեքստերին, որոնք վերցված են տարբեր աղբյուրներից՝ ամսագիր, լրագիր, հաշվետվություն, գիրք և այլն,
- կառուցել ճշգրիտ գրավոր և բանավոր խոսք՝ ընտրելով համապատասխան բառապաշար և կառուցվածք,
- ընտրել տեղեկույթ և ներկայացնել այն անգլերենով,
- տրամաբանորեն կազմակերպել մտքերը և փաստարկումները:

Ընթացիկ գնահատում

Աշակերտները ընթացիկ գնահատվում են տնային աշխատանքի և ընթացիկ քննական աշխատանքների համար:

Մասնակցության գնահատականը հիմնվում է աշակերտների՝ դասապրոցեսում ներգրավվածության և ներդրման վրա: Տնային աշխատանքները և մասնակցությունը գնահատվում են ելնելով ձևավորող գնահատման սկզբունքից:

Ստուգումների գնահատումը պայմանավորված է գնահատման ենթակա խոսքային գործունեության տեսակով և մասնակցության կամ ստուգման ձևով՝ բանավոր հարցում, գրավոր աշխատանք (թեստ, տեքստի վերլուծություն կամ մեկնում, ստեղծագործական աշխատանք և այլն), գործնական առաջադրանք, նախագիծ և այլն: Բոլոր դեպքերում գնահատումը բազմազանեցված է ըստ ձևերի, ձևաչափի (գնահատում ուսուցչի, դասընկերոջ կողմից կամ ինքնագնահատում), նպատակների և բացի բուն ուսումնական խնդիրներից լուծում է նաև միջանձնային հաղորդակցության և թիմային համագործակցության հմտությունների կայացման խնդիրները:

Ընթացիկ գնահատման բաղադրիչների հարաբերակցությունը հետևյալն է՝ ընթացիկ ստուգումներ՝ 30 %, տնային աշխատանք՝ 10% և քննական աշխատանք՝ 60%:

Ամփոփիչ գնահատում

Ամփոփիչ քննությունը ներառում է լսելու, կարդալու և արձագանքելու, գրավոր աշխատանքի և բանավոր խոսքի բաղադրիչներ: Յուրաքանչյուրը հիմնված է գնահատման վերոնշյալ սկզբունքների վրա և ունի համապատասխանաբար 45%, 25% և 30% կշիռ ընդհանուր գնահատականի մեջ:

Սովորողները լսում են բանավոր խոսք, կարդում են նյութեր տարբեր կոնտեքստով, տարբեր աղբյուրներից և պատասխանում հարցերին, որոնք ներառում են իմաստի վերարտադրում, կարծիքի, տեսակետի, հուզական արձագանքի արտահայտում, ամփոփում, անձնական փորձառության օգտագործում: Սովորողները

պատասխանում են Էստի հարցին, ներկայացնում և քննարկում են տրված թեմաները և հիմնավորում իրենց պատասխանները: